

Ժողովուրդ

8
(2858)

27 հունվարի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

Է. Երեւան, Արվյան 22ա/3 (0010) + 374 10 546423 @ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

«Ժողովուրդ» ՕՐԱԹԵՐԹԸ ՂԱԳԹԵԼ Է DJ ՎԱԿԳԻՆՍԻՆԻ ԵՎ ԱՐՄԵՆ ԹՐՈՒՍՅԱՆԻՆ, ՎՃԻՌ



«Ժողովուրդ» օրաթերթը դատարանում հաղթել է Արուսիկ Մկրտչյանին՝ DJ Վակցինային։ Ակտենք սկզբից. «Ժողովուրդ» օրաթերթը դեռևս 2019թ.-ի հուլիսի 12-ին «Ինչպես է Արսեն Թրոսյանի ընկեր DJ Վակցինան օգտվում պետական բյուջեից. 20 հազար դոլար՝ նրա ընկերությանը» վերտառությամբ կոչ էր հրապարակել, որտեղ հստակ փաստերով բացահայտել էին, որ ԶԳ-ական պատգամավոր Արսեն Թրոսյանի ղեկավարության օրոք ՀՀ առողջապահության նախարարությունը Արուսիկ Մկրտչյանի՝ DJ Վակցինայի հիմնադրած «Ին Փորգրես Փորդաքշն» ընկերության հետ պայմանագիր է կնքել եւ մոտ 20 հազար ԱՄՆ դոլար փոխանցել նրան։

«Ժողովուրդ» օրաթերթը հստակ արձանագրել էր, որ DJ Վակցինան հաճախ էր այդ ժամանակ առողջապահության նախարար Արսեն Թրոսյանին գովազդում։ Հենց պայմանագրի կնքման օրն էլ կիսվել էր մի քաղաքացու գրառումով, որը նշել էր, թե շատ է ցանկանում, որ Թրոսյանը ՀՀ վարչապետ դառնա։

Հրապարակումից մեկ ամիս անց՝ 2019 թվականի օգոստոսի 12-ին, Արուսիկ Մկրտչյանը հայցադիմում էր ներկայացրել Երեւանի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ-ի գրպարտություն համարվող տվյալները հերքելու եւ վնասի փոխհատուցման պահանջներով։

Հայցվորը դատարանին խնդրել էր պարտավորեցնել «Ժողովուրդ օրաթերթ»-ին հրապարակել հերքում «Ժողովուրդ» օրաթերթի առաջին էջում եւ ArmLur.am կայքում, ընդ որում՝ կայքում հերքումը հրապարակել նաեւ տեսալուսանկարներով։

2022 թվականի դեկտեմբերի 21-ին դատարանը կայացրել էր վճիռ, որով մասնակի բավարարել է հայցադիմումը եւ պատասխանող լրատվամիջոցին պարտավորեցրել է տպագրել հերքում, իսկ հոգուտ հայցվորի՝ բռնազանձել 4000 ՀՀ դրամ որպես կայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար, եւ 150000 դրամ որպես փաստաբանի խելամիտ վարձատրություն։

«Ժողովուրդ» օրաթերթը բողոքարկել էր այս վճիռը Վերաքննիչ քաղաքացիական դատարան։ 2023 թվականի մայիսի 18-ին այս առյուծ վարույթ էր ընդունել բողոքը։

Եվ, ահա, 2024թ.-ի հունվարի 9-ին Վերաքննիչ դատարանը վերջնական որոշում է կայացրել մերժել DJ Վակցինայի հերքման պահանջը եւ հոգուտ «Ժողովուրդ» օրաթերթի նրանից բռնազանձել 10.000 դրամ որպես Վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար։

Դատարանի որոշմամբ՝ ՀՀ պետական բյուջեից «Ժողովուրդ օրաթերթին» վերադարձվել է 24.01.2023 թվականի թիվ 000533 [895251032] վճարման հանձնարարագրի՝ անդորրագրով բողոքի համար վճարված գումարից 5.000 դրամ։ Այսպիսով, «Ժողովուրդ» օրաթերթը վերջնականապես հաղթեց դատարանում։



Վերջին շրջանում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը սկսել է կարգային հունձ իրականացնել։ 2024 թվականի հունվարի 27-ի դրությամբ արձանագրվել է աշխատանքից ազատվելու մի քանի օրվա տարբերությամբ՝ Նիկոլ Փաշինյանի մարզերի մարզպետների համար, Էդուարդ Զովինսկիյանը եւ Արամ Խաչատրյանը աշխատանքից ազատվելու մի քանի օրվա տարբերությամբ՝ Նիկոլ Փաշինյանի մարզերի մարզպետները։ Նրանց հաջորդեց Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Դուլարյանի ազատումը, որը, ըստ վարչապետ Փաշինյանի, տապալել էր դպրոցաշինության ոլորտը եւ նախկինների գործը շարունակելով՝ գումարներ էր մխիթել պետությունից։ Ազատվելից ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Վահե Գեորգյանը։ Բանն այն է, որ Նիկոլ Փաշինյանը հավատարիմներ է փնտրում կարեւոր պաշտոնների նշանակելու համար, սակայն կուսակցության հայացքներին հավասարում մարդկանց թիվը չի ավելանում, կարգեր դեռ չի գտնում։ Հավելեց, որ արդեն տեսական ժամանակ է թափուր է Քաղաքաշինության կոմիտեի նախագահի հաստիքը, գրեթե մեկ տարի թափուր է Միջուկային անվտանգության կոմիտեի նախագահի հաստիքը, ինչպես նաեւ Պետական պահպանության ծառայության պետի պաշտոնը։ Անցած տարվա նոյեմբերից թափուր է Կորուսակցայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պաշտոնը։ Տարեվերջին կայացած ԱԺ կիստերի ընթացքում ԶԳ-ականները այդպես էլ չկարողացան իրենց «սրտի թեկնածուին» գտնել այս պաշտոնի համար։ Ավանդատ է, որ Նիկոլ Փաշինյանի վարկանիշը շարունակում է իջնել, այդ պատճառով էլ նրանք ղեկավարում են գտնել իրենց «սրտի պաշտոնյաներին»։

Ինչո՞ւ են ԲԴԻ-ից հեռանում իշխանության հետ սերտ կապեր ունեցող պաշտոնյաների հարազատները։ Տպավորություն է, որ ԲԴԻ նախագահ Կարեն Անդրեասյանը նրանցից ազատվում է նախագահի պաշտոնը պիտի պահելու համար, իսկ որոշ անդամներ էլ խորհուրդն օգտագործում են դատական համակարգի «ամենալուրդ» առյուծում հաստատվելու համար։ Իստեղ փաստերով։ ArmLur.am-ը գրել էր, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորի թափուր տեղի համար Ազգային ժողովին է առաջարկվել ԲԴԻ-ի 2024 թվականի հունվարի 22-ի որոշումը։ Ուաջարկվել են Մասնկուսության դատարանի դատավոր Արթուր Աթաբեկյանի, Երեւան քաղաքի դատավոր Արման Օհանյանի եւ ՀՀ քաղաքացի Գուրգեն Մայիսյանի թեկնածությունները։ Այսինքն՝ ԲԴԻ նախագահ Կարեն Անդրեասյանը գալու է ԱԺ եւ Վճռաբեկ դատարանների թեկնածուներին ներկայացնել ԱԺ-ին։ Ուաջարվում այն է, որ այս թեկնածուներից մեկը Արթուր Աթաբեկյանն է։ Արթուր Աթաբեկյանը ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վահե Դալումյանի եւ Տավուշի ներկայիս մարզպետ Հայկ Դալումյանի հորաբորոջ որդին է։ Տավուշի մարզպետի դատավոր ազգականը ցանկանում է լքել ԲԴԻ-ն։ Դալումյանը Նիկոլ Փաշինյանի քավորն է, նրա եղբայր Վահե Դալումյանն էլ Ազգային ժողովում պատգամավոր է «Իմ քայլը» խմբակցությունից։ Եվ, ահա, ստեղծվել է իրավիճակ, որ 2023թ. հոկտեմբերին Վճռաբեկ դատարանն էին տեղափոխվել ԲԴԻ անդամներ Նաիրա Զովինսկիյանը եւ Դավիթ Խաչատրյանը, որը Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի եղբայրն է ու, ըստ դատական համակարգի, նրա եւ ԲԴԻ նախագահի ջրերը մեկ առվով չէին հոսում, եւ Կարեն Անդրեասյանը գործարքի գնաց ու նրան ուղարկեց Վճռաբեկ դատարան։ Ավելի վաղ ԲԴԻ արդեն նախկին անդամներ Լիպարիտ Մելքիսյանը, Սերգեյ Չիչոյանն էին ԲԴԻ-ից տեղափոխվել Վճռաբեկ։ Ստացվում է, որ ԲԴԻ-ն որոշ դատավորների համար դարձել է «գործիք» սեփական կարիերան կառուցելու համար, իսկ ոմանց էլ ուղարկում են գործարքի արդյունքում, որ պիտի պահեն ԲԴԻ նախագահի դիրքերը։

ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի անդամի թափուր պաշտոնի համար իշխող «Քաղաքացիական պայմանագիր»-ն առաջարկել է վանաձորի փաստաբան Կարեն Թումանյանի թեկնածությունը։ Մասնավոր գրեց, որ նրա լրբիքը ԶԳ-ում իրականացրել է պատգամավոր Արիկ Դավիթյանը, որն անձամբ է ԱԺ ամբիոնից ներկայացնելու թեկնածուին։ «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե ով է փաստաբան Կարեն Թումանյանը։ Նա 2023թ. մայիսի 25-ին Հակակոռուպցիոն քաղաքացիական պալատի դատավորի պաշտոնում էր առաջարկվել, սակայն ԶԳ-ն մերժեց նրա թեկնածությունը։ Հիմա Արիկ Դավիթյանը կրկին առաջ է բերել նույն Կարեն Թումանյանին, բայց էլի խնդիրներ են առաջացել։ Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» ակտիվ ջանքերով անգույն մնացած Կորուսակցայի կանխարգելման հանձնաժողովը պետք է բարեկարգության գնահատական տա Կարեն Թումանյանի մասով՝ դրական կամ բացասական։ «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություններ հասան, որ սկանդալային բացահայտում է արվել Կարեն Թումանյանի կենսագրության մեջ։ Պարզվում է, որ 1976 թ. ծնված Թումանյանը, որի 18 տարին լրացել է 1994թ.-ին, պարտադիր զինվորական ծառայությունից ազատվել է ընտանեկան դրության հիմքով։ Այսինքն՝ վիճեց բանակ զորակոչվելու հասցրել է ունենալ 2 երեխա եւ այդ հիմքով, օրենքով սահմանված կարգով, ազատվել է պարտադիր զինվորական ծառայությունից, կամ փաստաթղթերով ամուսնացել է այնպիսի կնոջ հետ, որն արդեն 90-ականներին երկու երեխա ուներ։ «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքի տակ է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրված փաստաթուղթն այն մասին, թե ինչ հիմքով է ազատվել բանակից Կարեն Թումանյանը։ Ուստ այդմ՝ նա հասցրել է մինչեւ զորակոչում ունենալ 2 երեխա։ Թումանյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրոյցում ասել է, որ իր կյանքում 1 անգամ է ամուսնացել՝ 2012 թվականին, այսինքն՝ 36 տարեկանում, եւ հարց է առաջանում, թե այդ դեպքում ինչպես է 94թ.-ին 18-ը բողոքած Թումանյանը ազատվել պարտադիր զինծառայությունից, եթե 36 տարեկանում է ամուսնացել եւ ակնհայտորեն ունի փոքր կին եւ երեխաներ։ Լուրեր կան, որ նա արդեն 2 երեխա ունեցող մի կնոջ հետ է ամուսնացել, որից հետո բաժանվել է, ապա այդ կնոջ հետ է ամուսնացել նրա հայրը։ Թումանյանը հերքեց այդ տեղեկությունը՝ ասելով, որ մեկ անգամ է ամուսնացել։



ԻՐԱՎԻՃԱԿ

«ԵՎՐՈՊԱՑԻՆԵՐԸ՝ ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ»

ՊԵՏՔ Է ՀԱՐՅԸ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՊԱՐԵԼ

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

Թբիլիսիում տեղի է ունեցել Հայաստանի եւ Կրասնոյարսկի վարչապետներ Նիկոլ Փաշինյանի եւ Իրակլի Դարիբաշվիլիի առանձնազրույցը: Զրուցակիցները քննարկել են Հայաստանի եւ Կրասնոյարսկի միջեւ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի նիստի օրակարգին, երկկողմ քաղաքական եւ տնտեսական կապերին առնչվող հարցեր: Կողմերն ընդգծել են Հայաստանի եւ Կրասնոյարսկի միջեւ համագործակցության ռազմավարական բնույթը եւ վստահություն հայտնել, որ միջկառավարական հանձնաժողովի նիստը նոր ազդակ կհաղորդի երկկողմ փոխգործակցությանը բոլոր ոլորտներում: Այս համատեքստում անդրադարձ է կատարվել առեւտրատնտեսական կապերի հետագա զարգացմանը, տարբեր ուղղություններով համատեղ ծրագրերի իրականացմանը վերաբերող հարցերի: Ստորեւ են փոխանակվել տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացների շուրջ: Զրուցակիցները կարտրել են խաղաղության եւ կայունության ուղղությամբ հետետղական քայլերի իրականացումը:

«ԱՄԵՆ ԶԱՆՔ ԳՆԵԼՈՒ ԵՄ»

Աժ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմայանը սոցցանցի իր էջում գրել է. «Հերթական համայնքային այցի շրջանակներում հանդիպել եմ Արմյան քաղաքում բնակվող՝ Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին: Ծանոթացել եմ «Գ. Ծառուկյանի անվան Արմյանի սպորտի եւ մշակույթի համալիր կենտրոնում» բնակվող արցախցիների կենսապայմաններին, լսել յուրաքանչյուրի անհատական խնդիրները: Իմ լիազորությունների շրջանակում ամեն ջանք ղեկելու եմ, որպեսզի բարձրացված խնդիրները ստանան պատշաճ լուծում»:

ԱՐԶԱԳԱՆՔԵԼ Է

Արդրեջանի ԱԳՆ-ն արձագանքել է ՀՀ ԱԼԾ-ի՝ Բաքվին ակնասպառ քարտեզներ տրամադրելու մտադրության մասին հայտարարությանը: Ըստ այդմ Արդրեջանն ի գիտություն է ընդունել այդ հայտարարությունը: Ըստ նրանց՝ թեեւ մինչ այդ փոխանցված քարտեզներում նշված է եղել, որ այդ տարածքներում թաղված է 400 հազար ական, արդրեջանական կողմի գնահատմամբ, ականների քանակը գերազանցում է 1 միլիոնը: Ըստ նրանց՝ 2020թ. հետո, որտեղ տեղակայված են եղել ռուսական խաղաղապահ ուժերը, ավելի քան 500 հազար ական է տեղադրված եղել:

«Հայկական կողմի այս հայտարարությունը վկայում է այն մասին, որ նրա մտադրությունը մարդասիրական գործընթացին աջակցելը չէ, եւ այդ քայլը չի կարելի գնահատել որպես վստահության ամրապնդման միջոց: Արդրեջանական կողմը սպասում է, որ Հայաստանը ներկայացնի ակա-սապատված բոլոր տարածքների ճշգրիտ քարտեզները, որոնք մինչ այժմ ամբողջությամբ չեն ներկայացվել Արդրեջանին: Դրա հետ մեկտեղ, պետք է անհետաձգելի միջոցներ ձեռնարկվեն վերջին 30 տարում անհետ կորած շուրջ 4000 արդրեջանցիների ճակատագրի, ինչպես նաեւ արդրեջանցիների զանգվածային թաղման վայրերի մասին Հայաստանի կողմից տեղեկատվություն տրամադրելու նպատակով»,- ասված է նրանց ԱԳՆ հայտարարության մեջ:

«Եվրոպացիներ՝ հանուն Արցախի» համաեվրոպական շարժումը եվրոպական ժողովրդական հիսունից ավելի քաղաքներում կազմակերպում է շարքեր միջոցառումներ: Հունվարի 27-28-ին Քելզհայում, Ավստրիայում, Բուլղարիայում, Իտալիայում, Կիոռոսում, Շվեդիայում, Շվեյցարիայում, Նիդեռլանդներում, Միացյալ Թագավորությունում, Չեխիայում եւ Ֆրանսիայում կայանալիք համահայկական համախմբման նպատակով է շարքեր միջոցառումների միջոցով ազգային կառավարություններին եւ եվրոպական կառույցների ղեկավարներին հորդորել հստակորեն դասադարձել արցախահայությանը նկատմամբ Արդրեջանի կողմից կիրառված էթնիկ զտումների եւ ցեղասպան քաղաքականությունը, դասժամիջոցներ սահմանել Արդրեջանի ռազմաքաղաքական ղեկավարության նկատմամբ:

Գերմանահայերի կենտրոնական կոմիտեի նախագահ Զոնաթան Սպանզենբերգը նշել է, որ արցախահայությունը, ինչպես յուրաքանչյուր ժողովուրդ, ունի իրավունքներ, որոնք պետք է վերականգնվեն եւ հարգվեն: «Որպես քաղաքական ակտիվիստներ՝ մեզ համար կարեւոր է այդ իրավունքների համար պայքարելը: Անշուշտ, արցախահայությունն ինքն է որոշողը, թե ինչ ուղով է ուզում առաջ գնալ, բայց մենք պետք է համապատասխան ատյաններում եւ կառույցներում հարցը օրակարգում պահենք»,- ասել է Սպանզենբերգը՝ հավելելով, որ իրենց կոմիտեն հատկապես հետամուտ է, որպեսզի Գերմանիան Արդրեջանին առավել քան դատապարտող քաղաքականություն որդեգրի:

«Եվրոպացիները հանուն Արցախի» համաեվրոպական շարժումը համոզված է՝ արցախցիների անքակտելի իրավունքն է հայրենիք վերադառնալ, եւ պահանջում է, որ եվրոպական կառույցները նպաստեն միջազգային շոշափելի անվտանգային երաշխիքների ապահովմանը, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղին միջազգայնորեն երաշխավորված ինքնակառավարման կարգավիճակի տրամադրմանը:

Հայ Դատի Եվրոպայի գրասենյակի նախագահ Գասպար Կարապետյանը նշել է, որ յուրաքանչյուր հայի բարոյա-



կան պարտքն է պայքարել արդրեջանական գերության մեջ գտնվող մեր հայրենակիցների ազատության համար՝ օգտագործելով բոլոր լծակները: «Իրավիճակը շատ բարդ է, բայց առավելեւս հիմա պարտավոր ենք էլ ավելի համախմբված եւ նպատակաուղղված պայքարել»,- ասել է Կարապետյանը:

Երկօրյա համաեվրոպական համախմբման թիրախային հարցերի շարքում է նաեւ միջազգային դերակատարներից պահանջել արդյունավետ ճնշում գործադրել Արդրեջանի վրա՝ բացառելու Հայաստանի Հանրապետության նկատմամբ ագրեսիայի ցանկացած դրսեւորում եւ վերջինի ինքնիշխանությունը վտանգող ցանկացած գործողություն:

Շարժումը պահանջում է նաեւ ջանք չխնայել եւ օգտագործել առկա բոլոր լծակները՝ ստիպելու Արդրեջանին անհապաղ եւ անվերապահորեն ազատ արձակել 2020 թվականի սեպտեմբերի 27-ից ի վեր ձերբակալված բոլոր հայ ռազմագերիներին, քաղաքացիական պատանդներին, ինչպես նաեւ 2023

թվականի սեպտեմբերից ի վեր առեւանգված ԼՂ ռազմաքաղաքական ղեկավարության ներկայացուցիչներին:

«Եվրոպացիները հանուն Արցախի» շարժումը համաեվրոպական համագործակցային հարթակ է, որը միավորում է հայ համայնքի ներկայացուցչական մարմինները եվրոպական 15 երկրներում: Հարթակի առաջին նախաձեռնությունը նամակ էր՝ ուղղված Եվրոպական միության, Եվրոպայի խորհրդի, ինչպես նաեւ ԵՄ անդամ պետությունների ղեկավար անձանց՝ արցախահայությանն աջակցելու հորդորով, որը ստորագրել էին ավելի քան 500 եվրոպական կազմակերպություններ: Հարթակի առաջնությունն է համախմբել եվրոպական երկրների քաղաքացիներին՝ աջակցելով արցախահայության հիմնարար իրավունքների իրացմանը, միաժամանակ բարձրացնել Եվրոպայի քաղաքական, սոցիալական եւ մշակութային ոլորտներում այս խնդրի վերաբերյալ իրազեկվածությունը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Աժ ՆԻՍՏԵՐԸ ԿՄԵԿՆԱՐԿԵՆ

Աժ հանձնաժողովները հաջորդ քաբ ցիսեր կզումարեն:

ArmLur.am-ը Աժ-ից տեղեկանում է, որ երեքշաբթի՝ հունվարի 30-ին, Նիստ կա-նի Աժ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնա-ժողովը:

Քննարկվելու են «Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանու-թյան եւ օգտագործման մասին» ՀՀ օրեն-քում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին, «Տեսալսողական մե-դիայի մասին» օրենքում լրացումներ կա-տարելու մասին եւ «Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին» օրենքի նախագծերը:

Հաջորդ օրը՝ հունվարի 31-ին, Նիստ կանի Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը:

Հանձնաժողովի նիստին կքննարկվեն Հայաստանի Հանրապետության հարկա-յին օրենսգրքում փոփոխություն կատա-րելու մասին, «Պետական գույքի մասնա-վորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում փոփոխու-թյուն կատարելու մասին, «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում լրա-ցումներ եւ փոփոխություններ կատարե-լու մասին եւ «Պետական տուրքի մա-սին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին օրինագծերը:

Պետական-իրավական հարցերի մշ-տական հանձնաժողովը Նիստ կզումարի փետրվարի 1-ին, օրակարգում 3 հարց է՝ «Հայաստանի Հանրապետության դա-

տական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ եւ փոփոխություն-ներ կատարելու մասին, Կարգական իրավախախտումների վերաբերյալ Հա-յաստանի Հանրապետության օրենսգր-քում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին եւ «Ինտերնետով հրապարակային եւ անհատական ծա-նուցման մասին» օրենքում լրացում կա-տարելու մասին նախագծերը:

Աժ աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նիստը կկայանա փետրվարի 2-ին՝ ժամը 12:00-ին. քննարկվելու է «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում փո-փոխություններ կատարելու մասին օրեն-քի նախագիծը:

Հիշեցնենք, որ Աժ հերթական Նս-տաշրջանը կմեկնարկի փետրվարի 6-ին:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄՐՑՈՒՅԹԸ ԳԵՌ ՉԻ ԿԱՅԱՑԵԼ

2022թ.-ին սկսվել է իջեան- Գանձաքար-Իծաքար-Նավուր- Բերդ ավտոճանապարհի մաս կազմող Գանձաքար-Իծաքար 35 կիլոմետր երկարությամբ ճանապարհի կառուցապատումը: Այդ նպատակով պետությունից հատկացվել է 4,5 միլիարդ դրամ: Ռազմավարական նշանակություն ունեցող Տավուշի մարզկենտրոն իջեանը Բերդ քաղաքին կապող, Տավուշի սահմանագծին շրջանցող այդ ճանապարհի կառուցապատումը նախատեսված էր ավարտել 2023թ.-ին, սակայն գործը ձախողվել է: Այդ ճանապարհի կառուցապատումն իրականացրած «Խաչիար» ՍՊԸ-ն 2022 թվականին 6 կիլոմետրանոց հատկաձում թույլ, չամրացված գրունտի վրա ասֆալտապատում է կատարել, որի հետևանքով ասֆալտը քանդվել է, այդ 6 կիլոմետրի մի մասը նորից են ասֆալտապատել: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք արել Գանձաքար-Իծաքար ճանապարհը կառուցապատող ընկերության մասին: Մարզպետի պատասխանում նշված է, «Գանձաքար-Իծաքար ճանապարհի աշխատանքների մրցույթը դեռ չի կայացել նախորդ շինկազմակերպության կողմից դատական պրոցեսի պատճառով»:

ԱԶԱՏՎԵԼ ԵՆ ԱՃԻԱՏԱՆՔԻՑ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք կատարել բարձրագույն կրթություն չունենալու և կամավոր ատեստավորումից բացասական արդյունք ունենալու պատճառով աշխատանքից ազատված ուսուցիչների թվի մասին: Մարզպետարանից պատասխանել են, որ 2023-2024 ուսումնական տարվա նախաշեմին և ուսումնական տարվա ընթացքում Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներից բարձրագույն կրթություն չունենալու և կամավոր ատեստավորումից բացասական արդյունք ունենալու պատճառով ներկա դրությամբ աշխատանքից ազատվել է 22 ուսուցիչ: Բուհի դիպլոմ չունեցած և կամավոր ատեստավորումից բացասական արդյունքներ ունեցած, հանրակրթական դպրոցներում աշխատանքը կորցրած ուսուցիչների մեջ մեծ թիվ են կազմում փորձառու, ուսուցչական աշխատանքի տասնյակ տարիների փորձ ունեցող ուսուցիչներ:

ԳԱՐԵԱՐՈՏԸ ԽԵՂԳՈՒՄ Է

Իջեանի համայնքի Լուսաձոր գյուղի կողքով միջպետական ավտոճանապարհով երթեւեկողները զգում են ծանր հոտ, որը Լուսաձորի անասնապահական ֆերմայի և նույն տարածքում առկա պանրագործարանի գործունեության հետևանք է: Այդ գարշահոտի վերաբերյալ 12 տարի բազմաթիվ բողոքներ ենք ստացել Տավուշի մարզի բնակիչներից, բազմիցս բարձրացրել ենք այդ խնդիրը, սակայն հարցը չի լուծվում: «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամի Լուսաձորի ֆերման ստեղծվել է 2012թ.-ին՝ Տավուշի մարզի և Ֆրանսիայի Օ-դե-Սեն դեպարտամենտի միջև ապակենտրոն համագործակցության շրջանակներում: 2016-ի ամռանը Լուսաձորում ոչնչացրել, հորել են Լուսաձորի պանրագործարանում արտադրված 3.5 տոննա պանիրը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՅԱՆ Տավուշ

ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐ

ՏՏ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՄՆՅԱԿԸ

Հայաստանի ղեկավարների կոմիտեի հրատարակել է 2023-ի 1000 խոշոր հարկատուների ցանկը, որում, ինչպես 2022-ին, ներառված են մի քանի ՏՏ ընկերություններ: Ստորև ներկայացնում ենք այս ընկերությունների թոփ 5-ը:


2023-ին ՏՏ ընկերություններից առաջին տեղում է հայտնվել «ՎԻԷՄ Արմենիա»-ն (Veeam Armenia)՝ 7,165,807,000 դրամ հարկերով, եւ զբաղեցրել է ընդհանուր ցուցակում 36-րդ տեղը այն դեպքում, երբ 2022-ին այս ընկերությունը զբաղեցնում էր ցուցակի 106-րդ տեղը՝ 2,636,640,000 դրամ հարկերով: ՏՏ ընկերությունների 2022-ի ցուցակում «ՎԻԷՄ Արմենիա»-ն զբաղեցնում էր երրորդ տեղը և փաստացի երկու կետով բարելավել է դիրքերը և դարձել առաջինը:

«Սինոփսիս Արմենիա» (Synopsis Armenia) ընկերությունը, որը 2022-ին ՏՏ ընկերությունների ցուցակում զբաղեցնում էր առաջին տեղը (1000 խոշոր հարկատուների ընդհանուր ցուցակում՝ 60-րդը), այս տարի զբաղեցրել է 58-րդ տեղը ընդհանուր ցուցակում և երկրորդը՝ ՏՏ ընկերությունների մեջ՝ 5,270,593,000 դրամ վճարած հարկերով: Երրորդ տեղում է «Էպամ Սիսթեմզ» (EPAM)՝ 4,759,328,000 դրամ հարկերով, եւ զբաղեցնում է ընդհանուր ցուցակի 65-րդ հորիզոնականը: 2022-ին «Էպամ Սիսթեմզ»-ը հարկատուների ընդհանուր ցուցակում 78-րդն էր՝ 3,642,418,000 դրամ հարկերով, իսկ ՏՏ ընկերությունների վարկանիշային աղյուսակում՝ 3-րդ տեղը: Ընկերությունը մոտ 110 մլն դրամ պակաս հարկ է վճարել անցած տարի:

ՏՏ ընկերություններից ամենաշատ վճարած հարկերով չորրորդ տեղում է «Պիկսարտ»-ը (Picsart, 83-րդ տեղը ընդհանուր ցուցակում), որն անցած տարի վճարել է 3,729,260,000 դրամ հարկ: 2022-ին այս ընկերությունը երկրորդ տեղում էր ՏՏ ընկերությունների մեջ (66-րդը ընդհանուր ցուցակում)՝ 4,077,923 դրամ հարկերով: Ընկերությունը մոտ 300 մլն պակաս հարկ է վճարել 2023-ին:

Ցուցակի հինգերորդ տեղն է զբաղեցնում «Դատա Արտ»-ը (DataArt), որը 2023-ին վճարել է 2,872,616,000 դրամ հարկ և զբաղեցրել է ընդհանուր ցուցակի 114-րդ հորիզոնականը: Այս ընկերության հարկերը մոտ 100 մլն դրամով նվազել են 2022-ի համեմատ՝ 2,903,213,000 դրամ: Խոշոր հարկատուների ցանկում ընկերության դիրքերը եւս

ՏՏ ընկերությունների վարկանիշային աղյուսակը 2022-ին



փոխվել են. 2023-ին այն զբաղեցրել էր 95-րդ տեղը: ՏՏ ընկերությունների 2022-ի ցուցակում «Դատա Արտ»-ը զբաղեցնում էր 4-րդ հորիզոնականը:

«Սերվիսայթան արեվելք»-ը (Service Titan) 2023-ին հայտնվել է 1000 խոշոր հարկ վճարողների ցուցակի 116-րդ հորիզոնականում՝ 2,840,598,000 դրամ հարկերով: 2023-ին այս ընկերությունը բարելավել է իր դիրքերը ընդհանուր հարկատուների ցուցակում, եւ մոտ 900 մլն ավելի հարկ է վճարել՝ 2022-ին վճարած 1,983,784,000 դրամի համեմատ: ՏՏ ընկերությունների ցուցակում այս ընկերության դիրքերը մնացել են նույնը, այն զբաղեցնում է 6-րդ տեղը:

Հաջորդ 7-րդ տեղում է «Վիմուեր Իսթերն Յուրոպ»-ը (Vmware, ընդհանուր ցուցակում 155-րդն է), 2,016,393,000 դրամ հարկերով: 2023-ին այս ընկերությունը մոտ 400 մլն դրամով ավելի հարկ է վճարել, նաեւ իր դիրքերն է բարելավել ընդհանուր հարկատուների ցուցակում (162-րդը): ՏՏ ընկերությունների 2022-ի ցուցակում 8-րդն էր, այսինքն՝ մեկ տեղով բարելավել է իր դիրքերը:

Թոփ տասնյակի 8-րդ հորիզոնականում է «Դեվսոֆտ ԷլԷՄ» (DevSoft, ընդհանուր հարկատուների ցուցակում 177-

րդը), որն անցած տարի վճարել է 1,754,125,000 դրամ, այսինքն՝ մոտ 300 մլն դրամով պակաս, քան 2022-ին (1,466,960,000 դրամ): ՏՏ ընկերությունների 2022-ի ցուցակում այս ընկերությունը զբաղեցնում էր 7-րդ հորիզոնականը, այսինքն՝ մեկ կետով զիջել է դիրքերը:

Ցուցակի հաջորդ 9-րդ տեղում է «Էներջայզ Գլոբալ Սերվիսիզ»-ը (EGS, 202-րդ ընդհանուր ցուցակում)՝ իր 1,568,395,000 դրամ հարկերով: Ընկերությունը, 2022-ի համեմատ, 2023-ին մոտ 400 մլն դրամով պակաս հարկ է վճարել: 2022-ին 1000 խոշոր հարկատուների ցուցակում զբաղեցնում էր 136-րդ տեղը, իսկ ՏՏ ընկերությունների վարկանիշային աղյուսակում՝ 7-րդ հորիզոնականը, այսինքն՝ երկու կետով զիջել է դիրքերը:

Թոփ տասնյակը եզրափակում է «Քվանտորի ԱՄ»-ը (Quantori, 205-րդը ընդհանուր ցուցակում), որը 2023-ին վճարել է 1,539,782,000 դրամ հարկ: 2022-ի համեմատ՝ ընկերությունը մոտ 10 մլն դրամ պակաս հարկ է վճարել: 2022-ի ՏՏ ընկերությունների ցուցակում «Քվանտորի ԱՄ»-ը 2022-ին զբաղեցնում էր 9-րդ հորիզոնականը, այսինքն՝ 2023-ին այն մեկ կետով զիջել է իր դիրքերը:

ՆԱՆԻԿ ԱՐԱՍՅԱՆ

ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ

Աժ Հայաստան-Ղազախստան բարեկամական խմբի ղեկավար, սարածաբանային և եվրասիական ինստիտուտի հարցերի մեջակա հանձնաժողովի նախագահի ժողովուրդ Վադարակ Հակոբյանը հունվարի 26-ին հանդիպել է Ղազախստանի Հանրապետության ժամանած գործարարների հետ: Այդ մասին հայտնում են Աժ-ից:

Ողջունելով առաջին անգամ Հայաստան այցելած գործարարներին՝ Վադարակ Հակոբյանը կարեւորել է դազախ

գործընկերների հետ համագործակցությունը՝ նշելով, որ խորհրդարանական բարեկամական խումբը յուրահատուկ կամուրջ է երկու երկրների հարաբերություններում:

Հյուրերը Վադարակ Հակոբյանին են ներկայացրել իրենց կառույցի՝ մոտ երեք տասնյակ տարվա հասնող գործունեությունը՝ նշելով, որ հետեւում են վերջին հինգ տարիներին Հայաստանում ընթացող շինարարությանը և հետաքրքրված են մեր երկրում աշխատանքներ ծավալելու հնարավորությամբ:

Ղազախստանից ժամանած գործարարները նաեւ պատրաստակամություն են հայտնել հայ գործընկերների հետ կիսվել իրենց փորձով և գիտելիքներով:

Վադարակ Հակոբյանը ներկայացրել է մեր երկրում վերջին տարիներին իրականացվող մեծածավալ շինարարությունը, որն ընդգրկում է եւ բնակարանաշինությունը, եւ՝ ենթակառուցվածքները, հնարավոր համարել հողի ինքնուրույն համագործակցությունը:

Քննարկվել են հետագա համագործակցությանը վերաբերող հարցեր:

Ն. ԱՐԱՍՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար. 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՕՐԵՆՍՊՐԱՎԱՆ ԲԱՅ

ՀՍՏԱԿ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԶԿԱ

«Կենդանիների խնամքի կենտրոն»-ի տնօրեն Զարուբյուր Առաքելյանը կարծում է, որ թափառող կենդանիների հետ կապված խնդիրները շատ են, որովհետև ոլորտում որեւէ հստակ կարգավորում չկա. կա ոլորտի համալիր օրենսդրական կարգավորումների բացը լրացնելու կարիք:

«Թափառող կենդանիների խնդիրը Զայաստանում եւ լուծման տարբերակները» խորագրով քննարկման ժամանակ Երեւանի քաղաքապետարանի «Կենդանիների խնամքի կենտրոն» ՅՈՒՎ-ի տնօրեն Զարուբյուր Առաքելյանը նշեց, որ շատ հանդիպումներ են ունեցել Ազգային ժողովի գործընկերների հետ օրենսդրական բացը լրացնելու համար:

«Այժմ կա նախագիծ կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին, որով, կարելի է ասել, մեծ մասամբ կկարողանանք կանոնակարգել ոլորտը: Նախագիծը դեռ քննարկման փուլում է», -ասաց Առաքելյանը:

Ըստ նրա՝ Երեւանում վերջին տարիներին թափառող շների գլխաքանակը կրճատվել է՝ շնորհիվ ստերոիդների ծրագրի, սակայն դեռ կան թափառող շներ, որոնք բռնելը շատ դժվար է, իսկ այդ կենդանիները շարունակում են ձագեր ունենալ: Առաջիկայում «Կենդանիների խնամքի կենտրոն» ՅՈՒՎ-ի աշխատակիցները կկարողանան այդ շներին եւս բռնել եւ ստերոիդներ տալ:

«Կենտրոնն արդեն մի քանի տարի է՝ թափառող կենդանիներին ստերոիդներ տալով, թեստավորում եւ պատվաստում է կատաղության դեմ, նախորդ տարվանից նաեւ վերապատվաստում եւ բաց է թողնում: Ստերոիդներն մեջ նաեւ իր տեղն ունի վարակիչ հիվանդությունների կանխարգելումը: Ես ցավով պետք է արձանագրեմ, որ այս մասով աշխատանք իրականացվում է միայն Երեւան համայնքում եւ քիչ թե շատ այն համայնքներում, որոնք պայմանագրային հիմունքներով ստերոիդների ծրագիր են իրականացնում», - նշեց նա:

Անդրադառնալով այն խոսակցություններին, թե շատ կենդանիներ ՅՈՒՎ-ում անհետանում են՝ խնամքի կենտրոնի տնօրենը պատասխանեց, որ այդ դիտարկումը չփաստարկված է: Նա պարզաբանեց, որ որոշ կենդանիներ կարող են բերվել կենտրոնի կլինիկա եւ օրենսդրության համաձայն տարբեր պատճառով ենթարկվել քննեցման կամ պահվել կենտրոնում, ինչպես նաեւ լինում են դեպքեր, որ թափառող կենդանիներին ոչ թե պահում են կազմակերպությունում, այլ, ելևէլով նրանց անվտանգությունից, բաց են թողնում այլ տարածքում:

է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐՑԱԴԻՐ ԱՏԵՄՑԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՑՆԵՆ

Հայաստանում ուսուցիչների կամավոր ասեսավորմանը մասնակցել է միջին մասնագիտական կրթություն ունեցող 894 ուսուցիչ, որոնցից 354-ն են ասեսավորվել:



Այս մասին տեղեկացրեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը՝ անդրադառնալով միջին մասնագիտական կրթության եւ կամավոր ասեսավորումը չհաղթահարելու պատճառներով աշխատանքից ազատված ուսուցիչների թվին ու նրանց՝ աշխատանքի վերականգնվելու հնարավորությանը:

Անդրադառնալով միջին մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչների խնդրին՝ փոխնախարարը պարզաբանեց, որ նրանք արդեն ավելի քան 10 տարի տեղյակ էին, որ մինչեւ 2023 թվականի օգոստոսի 20-ը կարող էին շարունակել աշխատանքն առանց բարձրագույն կրթության: Այս ուսումնական տարում օրենքի փոփոխությամբ ամրագրվել է, որ եթե միջին մասնագիտական կրթությամբ ուսուցիչները կամավոր ասեսավորում անցնեն եւ ասեսավորվեն, ապա կշարունակեն աշխատել:

«Վերջին շրջանում այս ուսուցիչները մտահոգ են: Նրանցից շատերը բազմափորձ, բավականին բարձր արդյունավետություն ունեցող ուսուցիչներ են, որոնք չեն կարողացել հաղթահարել կամավոր ասեսավորումը: Մենք չենք ուզում, քանակաբար, կորցնել այս ուսուցիչներին եւ նրանց առաջարկել ենք, որ այն ուսուցիչները, որոնք պատրաստ են բարձրագույն կրթություն ստանալ, պատրաստ ենք աջակցել իրենց», - հավաստիացրեց ԿԳՄՍ նախարարի տեղակալը՝ հավելելով, որ ներկայումս հավաքագրվում են միջին մասնագիտական կրթությամբ այն ուսուցիչները, որոնք ցանկանում են ասեսավորվել:

Մյուս կողմից, որոնք ցանկանում են բարձրագույն կրթություն ստանալ:

Ավաջյանի խոսքով՝ պետության կողմից նրանց աջակցություն կցուցաբերվի ուսման վարձի փոխհատուցման տեսքով:

Բացի այդ, միջին մասնագիտական կրթությամբ ուսուցիչները կարող են շարունակել գործունեությունը, եթե հաջորդ տարի կրկին մասնակցեն կամավոր ասեսավորմանը եւ բավարար արդյունքներ գրանցեն:

«Բայց քանի դեռ այս պայմաններից որեւէ մեկն իրենք չեն ապահովել, չեն կարող շարունակել, որովհետեւ դա օրենքի պահանջ է, եւ որեւէ մեկը չի կարող իր ցանկությամբ փոխել այն», - ընդգծեց փոխնախարարը:

Ըստ նրա՝ բարձրագույն կրթությունը շարունակելու դեպքում այս ուսուցիչները կարող են աշխատանքը շարունակել միայն բուհի ավարտելուց հետո, սակայն օրենքը նաեւ սահմանում է, որ վերջին կուրսում նրանք կարող են կամավոր աշխատել, բայց վճարվել գյուղական դարոցներում, որտեղ ուսուցիչ կարիք է զգացվում:

խատել, բայց վճարվել գյուղական դարոցներում, որտեղ ուսուցիչ կարիք է զգացվում:

Խոսելով կամավոր ասեսավորման մասին՝ փոխնախարարը նշեց, որ կարգի համաձայն՝ բոլոր այն ուսուցիչները, որոնք երկու տարի շարունակ չեն հաղթահարել ասեսավորումը եւ 50-59-ը միավորի սանդղակում չեն իրենց արդյունքներով, կամ երկու տարվա ընթացքում 15 տոկոսից ավելի աճ չեն գրանցել, ապա պետք է ազատվեն աշխատանքից, բայց «Համարկրթության մասին» օրենքի վերլուծությունը ցույց տվեց, որ կամավոր ասեսավորման գործընթացը պարտադիր ասեսավորման հետ համադրելու խնդիր կա, եւ առաջիկայում օրենքի փոփոխություն կիրականացվի: Զետեաբար, այս ուսուցիչներից որեւէ մեկն աշխատանքից դուրս չի մնացել. նրանք շարունակում են աշխատել եւ հաջորդ տարի եւս կարող են մասնակցել ասեսավորմանը:

էՄՄՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՅՆ ՈՒՂՂՎԱԾ Է ԱՆՉԱՏԻՆ

Հայաստանում ճաղողմիայի դեսպանության աջակցությամբ վերանորոգվել ու բարելավվել են «Կանանց աջակցման կենտրոն»-ի գրասենյակը եւ ընթացակարգը բռնության ենթարկված անձանց համար նախաստեղծ աղյուսաբանները:

նությունը բաց է նման ձեռնարկով ցանկացած համագործակցության համար:

«Կանանց աջակցման կենտրոն»-ի հանրային կապերի պատասխանատու Զարուհի Հովհաննիսյանը նշեց, որ Ճապոնիայի դեսպանատան աջակցությամբ վերանորոգվել ու բարելավվել են կենտրոնի գրասենյակի տարածքը եւ ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար նախատեսված ապաստարանները:

«Ծրագրի շրջանակում տրամադրվել են տարբեր տեսակի սարքավորումներ, որոնց շնորհիվ բարելավվել է մեր կողմից մատուցվող ծառայությունների որակը՝ այն դարձնելով ավելի մատչելի», - ասաց Հովհաննիսյանը:

Անդրադառնալով կենտրոնի դիմելիությանը՝ նա նշեց, որ միայն 2023 թվականի ընթացքում կենտրոնը գրանցել է ավելի քան 4000 հեռախոսազանգ: Ապաստարանային ծառայության շրջանակում աջակցել են 265-ից ավելի կանանց եւ երեխաների: Կենտրոնի կողմից իրականացվել է 1000-ից ավելի սոցիալական խորհրդատվություն, եւ 160-ից ավելի քրեական եւ քաղաքացիական գործեր մտել են դատարան:

Ըստ Զարուհի Հովհաննիսյանի՝ նախորդ տարիների համեմատ՝ կենտրոնի հաճախողների թիվը մեծացել է:

ՀՀ ԱՍՀ նախարարության մարդկանց թրաֆիքինգի եւ կանանց հիմնահարցերի բաժնի պետ Սոֆի Բոստանյանն էլ, կարեւորելով «Կանանց աջակցման կենտրոն»-ի դերը, նշեց, որ արդեն 4-րդ տարին է, ինչ կենտրոնի հետ համագործակցում են:

«Համագործակցության շրջանակում նախարարությունը համաֆինանսավորում է «Կանանց աջակցման կենտրոն»-ի կողմից գործարկվող թվով երկու ապաստարանների գործունեությունը: Մենք նաեւ ունենք հուշագիր «Կանանց աջակցման կենտրոն»-ի հետ, որի շրջանակում յուրաքանչյուր տարի վերապատրաստվում ենք իրականացնում ոլորտի առաջնագծում աշխատող մասնագետների հետ», - ասաց Բոստանյանը:

Բոստանյանն ընդգծեց, որ 2023 թվականին Հայաստանի բոլոր մարզերում եւ Երեւանում գործող կանանց աջակցման կենտրոնների ծառայություններից օգտվել է ընտանիքում բռնության ենթարկված շուրջ 1860 անձ: Ըստ նրա՝ թիվը ամեն տարի ավելանում է:

ՆԱՆԿ ՄՐԱՍՅԱՆ

«Պողովորդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:



ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞վ կարող է աշխատել որդես ուսուցիչ:
Աննա Ստեփանյան (26 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:

Առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը սահմանված պահանջները բավարարող անձով չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաեւ՝

1) տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող և տվյալ մասնագիտական կրթական ծրագրով կամ առանձին մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքած անձը,

2) բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏԾՄ) առարկաների մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող անձը՝ աշխատանքի ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով առնվազն 30 կրեդիտ հավաքելու պայմանով:

ՀՀ ԿԳՄՍ Նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». 1-ին և 2-րդ կետերով սահմանված դասընթացը կարող է կազմակերպել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կազմակերպությունը կամ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կրթական ծրագրով (մոդուլով):

ՕՐԵՆՔ

ՀԱՐՑ. Անճարձ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ վկայականը կորցնելուց հետո սրամադրվում է արդյո՞ք դրա կրկնօրինակը:
Արամ Գաբրիելյան (31 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. 2019 թվականի հուլիսի 1-ից հետո վկայականի կրկնօրինակ չի տրամադրվում, այլ վկայականը փոխարինվում է նոր գրանցման վկայականով՝ պետական գրանցման իրական ամսաթվի վերաբերյալ նշումով:

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Ընդ որում՝ մինչև 2019 թվականի հուլիսի 1-ը տրամադրված գրանցման վկայականը նոր գրանցման վկայականով փոխարինվում է դրա համար դիմումը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ներկայացվելու օրվանից 2-րդ աշխատանքային օրը, որի համար վճար չի գանձվում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մենեջեր Նուրյա Բեռլինի օպերայում:

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), և մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը և ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային ես/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	- 5 - 9 - 2 - 5	Արարատ	0 + 2 + 1 + 3
Կոտայքի լեռներ	- 6 - 8 - 2 - 4	Արմավիր	- 1 - 3 + 1 + 3
Կոտայքի նախալեռներ	0 - 3 0 - 2	Վայոց ձորի լեռներ	- 6 - 9 - 3 - 4
Գեղարքունիք	- 3 - 5 - 1 - 4	Վայոց ձորի նախալեռներ	- 2 - 4 + 1 + 3
Լոռի	- 8 - 13 + 2 + 5	Սյունիքի հովիտներ	- 2 - 4 + 6 + 8
Տավուշ	- 2 - 5 + 3 + 7	Սյունիքի նախալեռներ	- 6 - 9 - 2 + 3
Արագածոտնի լեռներ	- 0 - 3 - 3 - 5	ԼՂՀ	- 4 - 8 - 2 + 3
Արագածոտնի նախալեռներ	- 1 - 3 - 2 + 1	Երեւան	0 - 2 - 2 - 4

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 25.1.2024

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրայնաչափում և չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: